Հաստատված է ԳՀՍ «Ուրարտու» համալսարանի

Գիտական խորհրդի 25.08.2014թ. նիստում

Ռեկտոր Ս. Ա. Սեդրակյան

ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ
   «Ուրարտու» համալսարանի ամբիոնի գործունեության իրավաբանական հիմքերը
   1.1. Սույն ընթացակարգը սահմանում է համալսարանում գործող ամբիոնների գործունեության իրավական հիմքերը:
   1.2. «Ուրարտու» համալսարանի ամբիոնների ընթացակարգը հաստատում է գիտական խորհուրդը:
2. «Ուրարտու» համալսարանի ամբիոնների ընթացակարգի խնդիրներն ու իրավունքները
   2.1. Ամբիոնն ուսումնական, գիտական և վարչական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթություն, համակարգում է ուսումնական գործընթացը:
   2.2. Ամբիոնն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը, բուհի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը:
   2.3. Ամբիոնի կառավարումը հիմնված է միանձնյա և կոլեկտիվ կառավարման զուգակցման, կարևորագույն հարցերի լուծման ամբիոնի կոլեկտիվի մասնակցության սկզբունքների վրա:
   2.4. Ամբիոն ստեղծվում է տվյալ մասնագիտության գծով հինգից ոչ պակաս դասախոսների առկայության դեպքում, որոնցից առվազն երկուսը պետք է ունենան գիտական աստիճան:

3. Ամբիոնի վարիչի իրավունքները

   3.1. Ամբիոնի գործունեությունը իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է 5 տարի ժամկետով և պաշտոնում հրամանագրվում է ռեկտորի կողմից: Նիստերի ժամանակ լսվում և քննարկվում է ամբիոնի վարիչի ամենամյա հաշվետվությունը, գնահատում նրա գործունեությունը:

3.2. Ամբիոնի վարիչի գործունեությունը բացասական գնահատականի արժանանալու դեպքում հրավիրվում է ամբիոնի արտահերթ նիստ ամբիոնի վարիչին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար:

3.3. Ամբիոնի վարիչին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը լուծարում է ամբիոնի վարիչի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

4. «Ուրարտու» համալսարանի ամբիոնի իրավասությունը

4.1. Ամբիոնը լուծում է ուսումնական, գիտական աշխատանքի միջազգային կապերի և գործունեության այլ ոլորտների հարցեր:

4.2. Ամբիոնը համալսարանի ռեկտորին է ներկայացնում ուսումնական պլանները համալսարանի գիտական խորհրդում հաստատելու համար:

4.3. Քննարկում է ամբիոնի կիսամյակային և տարեկան քննաշրջանի արդյունքները:

4.4. Կատարում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրություն ըստ սահմանված կարգի:

4.5. Երաշխավորում է գիտական կոչման հավակնորդներին ըստ սահմանված կարգի:

Ամբիոնը տվյալ ֆակուլտետի դեկանատի հետ համատեղ ապահովում է՝

1. Ուսումնական պլաններով նախատեսված դասախոսությունների, գործնական, սեմինար և այլ պարապունքների անցկացումը:
2. Ընթացիկ քննությունների, ստուգարքների և ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպումը և անցկացումը:
3. Կուրսային ու դիպլոմային աշխատանքների թեմաների մշակումը, հաստատումը և ուսանողների կողմից դրանց կատարումը:
4. Ուսանողների ուսումնական, արտադրական պրակտիկաների ղեկավարումն ու արդյունավետ անցկացումը:
5. Ամբիոնում դասավանդվող բոլոր առարկաների, ուսումնական ծրագրերի մշակումն ու հաստատումը:
6. Ուսումնական բոլոր պարապումնքերի անցկացման ուսումնամեթոդական նյութերի մշակումը:

5. Ամբիոնի գործունեության հիմնական նպատակները

5.1 Բավարարել ուսանողների ինտելեկտուալ և մասնագիտական պահանջները:

5.2 Գիտական կոնֆերանսների , տեսական սեմինարների, քննարկումների և այլ կրթական միջոցառումների կազմակերպում և անցկացում:

5.3 Մասնակցություն միջազգային ծրագրերին և նախագծերին:

5.4 Բուհի գործունեության շրջանակում հոգեբանական կենտրոնի ստեղծում և մասնագիտական աջակցություն: